


11,675

Защита от
Земельного и Земельного
Устава

1908 г.







ՀԱՅԱՍՏԱՆԸ

եի

ՀԱՅԵՐԸ

ԸՍՏ ՔՍԵՆՈՓՈՆԻ

Շարադրեց

ԳՐ. ՂԱԶԱՐԵԱՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԵԼԷԲՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՑ. 7.

1908

9 (47. 325)

2-15

18

SEP 2011
AUG 2007
12. FEB. 1913
1912



ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԵՒ

ՀԱՅԵՐԸ

360

ԸՍՏ ՔՍԵՆՈՓՈՆԻ

21781



Շարադրեց

ԳՐ. ՂԱԶԱՐԵԱՆ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԵԼԷՔՏՐԱՆԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՑ. 7.

1908

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ ԸՍՏ ՔՍԵՆՈՖՈՆԻ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ո՛չ է պատմութիւնն ճշմարիտ՝
առանց ժամանակագրութեան:
Մ. Խորենացի II, 82, 1.

Մարդկութեան ձգտումներից մէկն էլ, եթէ կարելի է այսպէս ասել, ճշմարտութիւնն է: Եւ այս ոչ միայն որոշ դէպքերում, այլ միշտ և ամէն բանի մէջ պէտք է փնտռել: Հետևաբար՝ պատմութեան համար ևս խիստ անհրաժեշտ ու կարևոր է ճշմարտութիւնը: Թէ որքան մեծ նշանակութիւն ունի ազգերի համար ճշմարիտ, ստույգ պատմութիւնը, որ հիմնուած պէտք է լինի նաև ժամանակագրութեան վրայ, շատ բնորոշ և գեղեցիկ կերպով է սահմանում V դարի մեր երանելի Քերթովասյորը վերոյիշեալ հատուածով:

Բնականաբար՝ ազգերի, — որոնք տպւում են դարելով, — նպատակը պիտի լինի՝ ունենալ նաև իրենց այդ դարերի կեանքի ստույգ, ճշմարիտ պատմութիւնը: Խօսքը մասնաւորելով Հայոց ազգին, եթէ մի

ընդհանուր հայեացք ձգելու լինենք նորա անցեալ կեանքի պատմութեան, մասնաւորապէս հին դարերի պատմութեան վրայ, որ, մեծ մասամբ, ծածկուած է անյայտութեան քողով, ուրախութեամբ պիտի տեսնենք, որ այդ անծանօթ աշխարհը կարելի է գտնել՝ առաջնորդուելով միմիայն դիտութեան ցոյց տուած միջոցներով և վերականգնելով ճշմարիտ պատմութիւնը՝ ստոյգ, արժանահաւատ աղբիւրների վրայ հիմնուած:

Թէպէտ մեր պատմութեան հին շրջանները հայ և եւրոպացի գիտնականների անխոնջ եռանդի շնորհիւ որոշ մասերով արդէն պարզարանուած են, որոշ մասերով էլ մութ մնացած, սակայն այս վերջին մասերից մի քանիսի պատմութիւնը հնարաւորութիւն ունինք ստուգելու և վերականգնելու: Այս դէպքում, հարկաւ, ուր անբաւարար են մեր ազգային պատմիչներն ու աղբիւրները, պէտք է գիմենք օտարազգի պատմագիրներին, որոնք իրենց պատմագրութիւնների մէջ, մասնաւորապէս, տեղեկութիւններ են տալիս նաև Հայաստանի և հայերի մասին:

Այս վերջիններէս կարգին է պատկանում V դարի (Քրիստոսից առաջ) յոյն նշանաւոր պատմագիր Քսենոֆոնը:*) Քսենոֆոնի պատմածներն արժանահաւատ

*) Քսենոֆոնը (434—359) Սոկրատէսի հաւատարիմ աշակերտներիցն է և գորավար: Նա յայտնի է իւր «Anábasís»—Անաբազիս («Արշաւանք»), «Kuropedia»—Կիւրոպեդիա («Կիւրոս Մեծի պատմութիւնը»), «Memorabilia»—Մեմորաբլիա («Սոկրատէսի արդարացումը») և ուրիշ բազմաթիւ աշխատութիւններով: Սակայն նորա երկերի գլուխ գործոցը, միևնոյն ժամանակ և գործունէութեան թափն ու պսակը «Anábasís»-ն է: Այստեղ—բացի Կիւրոս Կրտսերի արշաւանքից, 10,000-ի նահանջի պատմութիւնից և պատահարների ու արկածների նկարագրութիւնից—հեղինակը տալիս է տե-

հն ոչ այն տեսակէտից, որ նա օտարազգի է, այլ այն, որ նա ինքն անձամբ և իւր արշաւախմբով եղել է Հայաստանում, ապրել այն տեղ, անցել շատ գիւղերով և ապա նկարագրել այն բոլորը, ինչ որ ինքն է արել և կամ իւր աչքով տեսել: Բնական է, որ նրա տուած տեղեկութիւններն ու նկարագրութիւնները աւելի ևս վստահելի ու ճիշտ կը լինեն, մասնաւորապէս որ խիստ անաչառ է գրում:

Հայաստանի և հայերի մասին տուած այդ խիստ շահեկան և թանգազին տեղեկութիւնները քանակով թէև շատ քիչ են, բայց, անհամեմատ, աւելի մեծ արժէք ու կշիռ ունին: Այդ բեկորները ստուգապէս լուսա-

ղեկութիւններ և այն ազգերի երկրի, տնտեսական կեանքի ու կենցաղի մասին, որոնց հետ շփուել են յոյները ճանապարհին, ի թիւս որոց և հայերի մասին, որքան այդ հնարաւոր է եղել նորա համար:

Կիւրոս Կրտսերը՝ իրան հասանելիք հայրական գահը իւր եղբայր Արտաքսերքսէս Բ. Մեմոնից խլելու համար՝ օգնութեան է հրաւիրում աւելի քան 13,000 յոյն զինուոր, խոստանում նոցա առատ վարձ, զինում ու պատրաստում ժամանակի բոլոր պատերազմական յարմարութիւններով և Լիւդիայից արշաւում Պարսկաստան: Ընդհարումը 405-ին (Քր. առ.) տեղի է ունենում Կունաքսի մօտ: Արիւնահեղ ու զժրադէ ճակատամարտում ընկնում է Կիւրոսը վիրաւոր: Անգլուխ մնացած 10 հազար յոյներն ընտրում են առաջնորդ պատմագիր Քսենոֆոնին, որը ոչ որպէս զինուորական, այլ լոկ որպէս գիտող, սոսկական անձնաւորութիւն, իւր որդիներով, մասնակցում էր Կիւրոսի արշաւանքին:

Նահանջող յոյները Պարսկաստանից արշաւում են գէպի հիւսիս-արևելք, անցնում Հայաստանի նահանգներով և Տրապիզոնի վրայով Քսենոֆոնի առաջնորդ-ղեկավարութեամբ հասնում իրանց ցանկալի ու հայրենի Հելլադա: Այս արշաւանք-նահանջն է ծառայել Քսենոֆոնին որպէս «Anábasís»-ի նիւթ:

բանում են մեր V և IV դարերի պատմութեան այն անորոշ շրջանը, որ զբաւում է Տիգրան Երուանդեանի յաջորդների ժամանակը, մինչև Հայկազանց Թագաւորութեան վերջին շառաւիղ Վահէ:

Քսենոֆոնի յիշեալ կտոր-կտոր մոզայիկները գտնուում են «Anábasis» («Արշաւանք») երկասիրութեան մէջ, IV գրքում գլխաւորապէս:

Բոլոր այդ տեղեկութիւնները կարելի է հետեւեալ չորս գլխաւոր խմբերի բաժանել: Առաջին՝ Հայաստանի քաղաքական բաժանումն ու Թագաւորները: Երկրորդ՝ գիւղերը: Երրորդ՝ գիւղացիները: Եւ վերջապէս չորրորդ՝ հիւրասիրութեան մասին:

Մասնաւորապէս գիտենք, որ, որովհետեւ Քսենոֆոնն անցել է միմիայն հարաւային և արեւմտեան Հայաստանով, այսինքն՝ Տարօնով և հիւսիս-արեւմտեան նահանգներով՝ Բասեն, Սպիր, Տայք ևայլն, նորատուած տեղեկութիւնները բոլորն, անշուշտ, չեն վերաբերում ամբողջ Հայաստանին, այլ գլխաւորապէս Հայաստանի այն նահանգներին, որոնց միջով որ անցել է յոյն արշաւախումբը. մանաւանդ որ Հայաստանն այդ ժամանակ ներկայանում է աւելի ընդարձակ սահմաններում սլարփակուած մի երկիր, քան այդ կարելի է հետեցնել լոկ Խորենացու պատմածների վրայ հիմնուելով:

Իսկ ինչ վերաբերում է ամբողջ Հայաստանին՝ այդ ևս կաշխատենք ցոյց տալ ստորև, ի նկատի ունենալով Քսենոֆոնի Թանգազին յիշատակութիւնները և այլ պատմական կարեւոր, նշանակալից հանգամանքներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ

ՈՒ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ.

Խորենացու թերին.—Արեւմտեաններ.—Հայաստանը Պարսկաստանի նահանգ.—Քաղաքական բաժանումը և մասերը.—Սոցալտեղերը, սահմանները.—Վարչական եղանակն ու Թագաւորները.—Ճանապարհը.—Յանաց զօրքերն ու նոցա արարքները:

Պատմահայր Խորենացին Տիգրան Երուանդեանից յետոյ, փոխանակ մեզ պատմութիւն տալու, մի քանի աշուններով է միայն բաւականանում՝ Վահագն, Առաւան, Ներսէս, Զարեհ, Արմոզ, Բագամ, Վան և Վահէ: Մինչդեռ այն կարեւոր հանգամանքները, որ կարողանում ենք օտար աղբիւրներով վերականգնել, բոլորովին անտես են առնուած մեծ պատմաբանի կողմից:

Այդ շրջանի լուսաբանութիւնը տալիս են մեզ Բիսիթունի ժայռի (Քիւրմանշահից մէկ մղոն դէպի հիւսիս, —հարաւային Պարսկաստանում) բեկեռագիր արձանագրութիւնները և արտաքին, գլխաւորապէս յոյն, պատմիչների վկայութիւնները:

559 թուականին (Քր. առ.), ինչպէս յայտնի է, Կամբիւսի որդի Կիւրոս Մեծը Արեւելքում հիմք դրաւ պարսկական հին միահեծան պետութեան, ընկաւ բազմաթիւ աշխարհակալութիւնների յետեւից և եղաւ, այսմաթիւ կոչուած, Արեւմտեան հարստութեան նախահայր: Կիւրոսը պատերազմ ունեցաւ Բաբելոնիների, Միդիացիների, Լիւդիացիների ու Փոքր—Ասիայի յունական բազմաթիւ քաղաքների հետ և միշտ էլ յաղթող հանդիսացաւ: Այնպէս որ շուտով նորա իշխանութեան տակ ընկան Հնդկաստանից մինչև Էգէյեան ծովն եղած բոլոր երկիրները: Կիւրոս մեռաւ 529-ին:

Կամբիւսից (529—522) յետոյ Արեւմտեան հարաւ-

տութեան երրորդ մեծ ներկայացուցիչը՝ Դարեն Ա. Վշտասպեան (521—485), պահպանելով նախորդներից ժառանգած երկիրն և ոյժը, իւր աշխարհակալութեան զեկն ուղղեց դէպի հիւսիս, դէպի խաղաղ ֆնացած Հայաստան։ Նորա ծառան և կամայականութիւնների հլու հպատակ Դադարշէս հայը երեք նուագ ջանքեր է գործ դնում «խորտակելու ապստամբ բանակը, որ չէր հնազանդում արքային (Դարենին), և նուաճելու Հայաստանը»։ Բայց ապարդիւն, որովհետեւ հայերը խիստ արիւթեամբ և յամառութեամբ էին կռուում իրանց երկրի ազատութեան համար։

Դարեն երկու անգամ էլ Ոմիսէսին է փորձում ուղարկել «ապստամբ ու անհնազանդ բանակը ոչնչացնելու և Հայաստանին տիրելու», բայց կրկին անհետեւանք է մնում գործը։ Պարսիկների աշխարհակալական նուաճումները հող չեն գտնում Հայաստանում։ Գոնէ այս է ապացուցանում Դարենի լռութիւնը այս պատերազմների հետեւանքների նկատմամբ։ Այլապէս՝ Դարենը իւր յաղթութիւնն ևս կանմահացնէր Բիսիթունի արձանագրութիւնների *) մէջ, ինչպէս վարուել է նա միւս ապստամբ ազգերին նուաճելիս։ Պարզ է, ուրեմն, որ Տիգրան Երուանդեանից յետոյ հայերն այնքան էլ կորած—մոլորուածները չեն եղել, և, հաղիւ թէ, աւելի քան ուշադրութեան արժանի գործեր կատարուած չը լինեն, որոնք մեզ անյայտ են բոլորովին։

Ինչ և իցէ. սակայն փաստն այն է, որ Հայաստանի մի մասը (հարաւային—արեւմտեան), դեռ ևս VI դարի վերջին քառորդից սկսած, համարւում էր Պարս-

*) Բիսիթունի արձանագրութիւնների մասին տես։ Ստ. Պալասանեանի «Պատմութիւն հայոց», Թիֆլիզ, 1890 թ., եր. 44—46։

կաստանի մի նահանգ, որը կառավարւում էր իւր առանձին սատրապ-նահանգապետով։ Այս նահանգը, զրամական հարկից զատ, արքայից արքային տալիս էր տարեկան 20,000 ձի, որոնք, ըստ Բսենոֆոնի, թէև մարմնով փոքր էին, քան պարսկականները, բայց չափազանց կրակոտ, տոկուն ու աշխոյժ։ Ապացոյց դրան՝ նոյն այդ Դարեն Վշտասպեանի և Բսենոֆոնի (485—465) արձանագրութիւնների մէջ Հայաստանը (իմն, —հարաւ—արեւմտեան) յիշատակւում է որպէս մէկը «յայնկոյս եփրատայ» գտնուող հարկատու երկրներից։

Հերոդոտից *) բոլորովին հաւաստի գիտենք, որ Դարեն Վշտասպեանը ամբողջ պարսից աշխարհը հարկերի համար բաժանել էր քսան մասի և այս բաժանումով տաճնեմէկերորդ մասը (նահանգը) համարւում էր Հայաստանը (ըստ մեզ՝ հարաւ—արեւմտեան մասը միայն)։

Այս իսկ պատճառով հայերն ևս, արպէս հպատակ և հարկատու պարսից, արեաց-զօրքի մէջ ունէին իւրանց զօրագունքը, զինուած վաճառներով ու նիւղակներով, և դնում էին պատերազմ—յօգնութիւն պարսից։

*) Հերոդոտը (484—420) յունաց ամենամեծ պատմագիրներից մէկն է։ Նա երիտասարդ հասակում շատ է ճանապարհորդել և ծանօթացել բազմաթիւ երկրների ու ժողովրդների հետ։ Հերոդոտի աշխատութիւնը բաղկացած է 9 մեծ հատորներից, որոնք մի—մի հըսկայ կոթողներ են հնութեան համար։ Գրում է անկեղծ, բարձր ոճով և յստակ բացատրութիւններով։ Նա ծանօթ է հայերի ու վաճառականութեան և առ հասարակ Արեւելքի կուլտուրայի վերաբերեալ խիստ շահեկան, արժէքաւոր տեղեկութիւններ ու ծանօթութիւններ։

Դրութիւնն այսպէս շարունակուում է նաև Դարեհի յաջորդներին՝ Դարեն Բ. Հարճորդու (423—405), սորա որդի Արտաշէս Ուշեղ—Արտաքսերքսէս Բ-ի (405—361) օրերում, մինչև Դարեն Կոդոմանոս (336—330) *) որին, ըստ աւանդութեան, Մակեդոնացու դէմ մղած պատերազմների ժամանակ յայտնապէս օգնում էր և հայոց հեծելազորքն ու հետևակների գունդը **) Վահէի ղեկավարութեամբ:

Ոչ մի կասկած չի կարող լինել, ուրեմն, որ հարապին—արեւմտեան Հայաստանը պարսիկ Աքեմենեանների տիրապետութեան տակ է եղել ընկած: Իսկ հիւսիսային—արևելեան Հայաստանը, ըստ մեզ, թողորովին ազատ էր պարսկական տիրապետութենից: Այն անյաջող պատերազմները, որ մղել է հայերի դէմ Դարեն Վատասպեանը, անկասկած այս արևելեան մասին ևս տէր լինելու ցանկութեամբ պիտի լինէին եղած, քանի որ Հայաստանի արեւմտեան մասն արդէն նորա իշխանութեան տակ էր և հարկաւոր:

Այս ենթադրութիւնն անելու հաստատուն հիմք տալիս է մեզ այն պատմական կարևոր իրողութիւնը, որ երբ, 330 թուականին, Դարեն Կոդոմանոսի օրով, վերջ տրուեցաւ Աքեմենեան հարստութեան Պարսկաստանում, Պարսկաստանի հետ հարաւային-արեւմտեան Հայաստանն ևս ընկաւ Աղեքսանդր Մակեդոնացու և նորա յաջորդների՝ Մակեդոնական-Սելևկեանների հզօր տիրապետութեան տակ: Այսպէս եղաւ, որովհետև Մակեդոնացիները միանգամից տէր չեղան ամբողջ Հայաստանին, այլ ժամանակի ընթացքում, սկզբում միայն

*) Թուականները նշանակում ենք ըստ Ferdinand Justi-ի և ըստ նորագոյն աղբիւրների:

**) Տես.—Հ. Յովսէփ Գաթրճեանի «Տիեզերական պատմութիւն», հատոր 1, երես 340:

պարսկական, իսկ ապա արևելեան մասերն ևս գրաւելով:

Օտար աղբիւրների համաձայն, այս խառն շրջանում, երբ «այդ զարամբ ելանէին տիրել աշխարհիս», հիւսիսային-արևելեան Հայաստանը բոլորովին անկախ էր և կառավարւում էր հայ-քնիկների ձեռքով. օրինակ, Արտաշիսայ հայ իշխանը Սելևկիացիներից ապահով լինելու համար աթոռը հաստատում է վերին Հայաստանում: Նոյն իսկ այն ժամանակ, երբ Աղեքսանդր Մեծի մահից յետոյ նորա զօրավարները Ասիայի ամենագեղեցիկ մասերն իրանց մէջն էին բաժանում, հիւսիսային նահանգների թւում Հայաստանի այս մասն էլ քնիկ իշխաններն էին կառավարում. մինչդեռ հարաւ-արեւմտեան Հայաստանը, ուր 325-ին Աղ. Մակեդոնացին, իւր կենդանութեան օրով, կուսակալ էր նշանակել Միհրան անունով պարսիկ իշխանի, բաժին ընկաւ Փրատափեռնէս զօրավարին:

Ամբողջ Հայաստանը (արեւմտեան և արևելեան) վերջնականապէս Սելևկեան թագաւորների իշխանութեան տակ ընկաւ 301 թուականին միայն *):

Վերոյիշեալ երկդարեան շրջանում (520—301) ահա Հայաստանը, այդ անառիկ, լեռնոտ, ըստ Քսենոֆոնի՝ ընդարձակ և բարեկեցիկ («պոլլէս քայ վիզայմոնոս») երկիրը երեանէ գալիս որպէս քաղաքականապէս երկու մասի բաժանուած՝ Արևելեան և Արեւմտեան, կամ, ինչպէս կոչւում էր հնում, Մեծ-Հայք և Փոքր-Հայք:

Մեծ-Հայքը կամ հիւսիս-արևելեան Հայաստանը տարածւում էր գլխաւորապէս Կուրի և Երասխի հովիտներում: Բացի այդ ընդարձակ սահմանից Արևե-

*) Համեմատել.— Ստ. Պալաստեան, «Պատմութիւն հայոց», եր. 48—49:

լեան Հայաստանը ձգւում էր նաև դէպի հարաւ: Հարա-
ւային կողմի սահմաններն եղել են՝ Կորդուաց («Կար-
դուսոյ») լեռները և Գենտրիտէս գետը, — այժմեան՝
Արևելեան Տիգրիսը, որ բաժանում էր Հայաստանը
Կորդուաց երկրից:

Հայաստանի այս մասում թագաւորում էր («Էր-
խէ») Օրոնտը, որ ունէր իւր առանձին զօրքը. սոցա
մէջ կային նաև վարձկան Մարդեր և Խալդեր *)
(«Մարդոյ քայ Խալդայեոյ միսթոֆորոյ») — Մարաց և
Խալդեաց երկրների բնակիչներ: Այս հանգամանքից
պարզապէս երևում է, որ Օրոնտի իշխանութիւնը տա-
րածւում էր նաև շրջակայ երկրների վրայ և նա մինչև
իսկ պահել է վարձկան զինուորներ: Գուցէ առաջին և
միակ դէպքն է այս մեր հին պատմութեան մէջ, որ
հայերս ունեցել ենք վարձկան զինուորներ: Այս իսկ
պատճառով կարելի է ենթադրել, որ պարսից թագա-
ւորն աշխատում էր Օրոնտին գրաւել և իրեն թիկունք
ունենալ. որովհետև Օրոնտը մեծ նշանակութիւն ունէր
և զօրաւոր, գիրք ունեցող իշխան էր: Այս կերպ մի-
այն կարելի է բացատրել այն իրողութիւնը, որ ա-
րեաց արքան (հաւանականաբար նոր գահ բարձրացած
Արտաքսերքսէս Բ-ը) իւր դուստրը տալիս է Օրոնտին
կնութեան, թոյլ տալով միևնոյն ժամանակ, որպէս
իւր փեսայի և կողմնակցի, լինել Արևելեան-Հայաստա-
նի (Մեծ-Հայքի) թագաւոր: (Տես. — «Anábasis», II, 4,
8; III, 5, 17; IV, 3, 3): Եւ այս կէտը արժանի է ա-
ռանձին ուշադրութեան:

Արտաքսերքսէս Բ-ը Արևելեան-Հայաստանին տի-

*) Մարդերն ու Խալդերը, ըստ Քսենոֆոնի, եղել
են ազատ, քաջ ժողովուրդ և իբրև զէնք, թշնամու
դէմ կռուելիս, գործ են ածել նիզակներ և երկար
վահաններ: («Anábasis»), IV, 3, 4:

րելու վերաբերմամբ չի հետևում այլ ևս հօր բռնի քա-
ղաքականութեան. խաղաղութեան, մեղմ վարմունքի և
ազգականութեան միջոցով է ուղղում հասնել նա իւր
նպատակին, կամ թէ, վերջապէս, ակնածում է Օրոն-
տի ուժից. որովհետև Քսենոֆոնն այն ժամանակ է
հանդիպում նորան (2 հոկտեմբերի, 404 թ.), երբ նա
իւր զօրքով Պարսկաստանիցն էր վերադառնում (ինչի՞
համար էր գնացել, — չը գիտենք) և իւր հետ կնութեան էր
տանում Թալստորի աղջկան:

Օրոնտ թագաւորը, որ, որքան այդ յայտնի է
մեզ, բոլորովին ուշադրութեան չի առնուած մինչև
այժմ Հայոց պատմութեամբ զբաղուողներից և ոչ մէ-
կի կողմից, հանդիսանում է շառաւիղ այն քաջարի և
բնիկ իշխանների, որոնք, մաքառելով Դարեհների և
նոցա հաճոյակատարների դէմ, պահպանում էին և պահ-
պանեցին իրանց մասի Հայաստանի ազատութիւնն ու
անկախութիւնը, թէ Պարսից և թէ Մակեդոնացիների
ժամանակ, գոնէ մինչև 301 թուականը: Իսկ թէ ո՞վ
անմիջապէս յաջորդեց նորան, կամ ո՞ւմ է յաջորդել
ինքն Օրոնտը և թէ ո՞ր թուականից մինչև որ թուա-
կան տեկց նորա թագաւորութիւնը, — նոյնպէս յայտնի
չէ, որովհետև այս հետաքրքրական անձնաւորութեան
մասին տեղեկութիւններ ունինք միմիայն Քսենոֆոնից,
իսկ սա, ղժբաղդաբար, աւելի մանրամասնութիւններ
չի հաղորդում մեզ:

Ի դէպ՝ շատ հաւանական է, որ Խորենացու
յիշած Տիգրան Ա-ի յաջորդները, մինչև Վահէ, ժա-
ռանգաբար տիրած լինեն Հայաստանի այս մասին
միայն՝ շահաբ, նախարար և կամ նոյն իսկ թագաւոր
անունով: *)

*) Համեմատել. — Հ. Յով. Դաթրճեան, «Տիեզե-
րական պատմութիւն», հատ. I, երես 321:

Մի այնպիսի կազմակերպուած և ընդարձակ երկիր, որպիսին նկարագրուած է Հայաստանը, հաղորդակցութեան դիւրութեան համար, անշուշտ, պէտք է ունենար կանոնաւոր, ձեռակերտ ճանապարհներ: Այդպիսիներից մէկը Հայաստանում, Քսենոֆոնի յիշելով, եղել է այն՝ հարաւից դէպի հիւսիս ձգուած ճանապարհը, *) որով յոյներն աշխատում էին, Կորդուաց լեռներն ու Արեւիկան Տիգրիսը (Գենտրիտէս գետն) անցնելուց յետոյ, բարձրանալ դէպի վեր՝ լեռները և մտնել Հայաստան, **) ուր Օրոնտն էր թափուում, («Ֆազան էյս Արմէնիան հէքսէյն, հէս Օրոնտաս էրխէ»): Եւ ահա Օրոնտն ու Արտուխը (անյայտ է, թէ ո՞ր է, բայց, հրեի, Օրոնտի սատրապը, կամ նշանաւոր զորավարներից մէկը) փակում են ճանապարհը, Արեւիկան Տիգրիսից 300—400 ոտնաչափ հեռուից, իրանց զինուած ու հետակ զօրքերով և յոյներին արգելում Հայաստան մտնել:

*) Եթէ չենք սխալուած այժմ էլ կայ այդ ճանապարհը՝ Բաղէշից դէպի հիւսիս, Վանայ լճի արեւմտեան ափերին մօտ, Նեմրուժ սարի տակ և միակ անցքն է Տիգրիսի հովտից Արածանու հովիտն անցնելու համար:

**) Պէտք է նկատել, որ Քսենոֆոնը Արեւիկան—Հայաստան (որ Օրոնտի երկիրն էր) անունը բնաւ չի յիշում, այլ լոկ Հայաստան («Արմէնիա»): Սակայն յաւանդէ յանուանէ յիշում է Արեւմտեան-Հայաստան («Արմէնիա հէ պրոս հէսպերան»), որի կառավարիչը եղել է Տիրիբազը կայն: Այս անունները՝ (Արեւիկան) Հայաստան, Արեւմտեան-Հայաստան՝ արդէն ապացոյց են, որ Հայոց երկիրը երկու որոշ, ուրոյն մասերից է եղել բազկացած, առանձին-առանձին թագաւորներով, և եթէ մասերից մէկը կոչուել է Արեւմտեան, միւսն էլ, հաւանորէն, պիտի կոչուէր՝ Արեւիկան, թէ չէ երկիրը միայն մի անունով կը կոչուէր՝ Հայաստան, կամ ուրիշ բան:

Սակայն յոյները կարողանում են խորամանկ միջոցներով անցնել գետը, մտնել Արեւիկան—Հայաստան և հինգ Փարսախ *) անվտանգ արշաւել Հայաստանի հարթութիւններով ու բլրակներով, որովհետեւ գետի ափին եղած գիւղերն աւերուել էին Կորդուաց դէմ մղուած պատերազմների ժամանակ և ոչ մի զիմադրող հողատերազմների ժամանակ և ոչ մի զիմադրող հողատեր չկար: Այսպիսով յոյները 404 թ. նոյեմբերի 18—19-ին (Քր. առ.) հասնում են մի մեծ գիւղ, ուր նրանք Վատրապը **) («աֆրիկոնտօ քօմէն, մեգալէ տէէն քայ բաղիլէյնօն էյխէ տօ սատրապէ») և օգտուում են երկրի պաշարի առատութիւնից:

Պէտք է ընդունել, ուրեմն, որ Մեծ-Հայքում, կամ բուն Հայաստանում, (Արեւիկան) բացի Օրոնտ թագաւորից եղել է և մի առանձին սատրապ, իւր յատուկ աթոռանիստ մեծ գիւղով: Իսկ այդ սատրապը կարող էր լինել վերոյիշեալ Արտուխը: Յոյները սատրապանիստ գիւղից 10 փարսախ հեռու անցնում են Տիգրիսի վտակից 15 փարսախ արշաւում 15 փարսախ և անցնելով Տելեները, նորից արշաւում 15 փարսախ վտակը,—մտնում են Տաբոաս գետը,—այժմեան Մշոյ վտակը,—մտնում են Տաբոս, կամ Արեւմտեան-Հայաստանի (Փոքր-Հայքի) սահմանները:

Հայաստանի այս մասն ընկնում է Եփրատի աւուաններից այն կողմը («յայնկոյս աղբէրայն Եփրաուաններից այն կողմը»)

*) Փարսախ—(«պարասանգէս») պարսկական երկաթե զինքն է, որ 30 ստադիայի, կամ 3750 ոտնաչափի է հաւասար (5 վերստ ուսական): Իսկ Ստադիա—(«ըստակա») հաւասար է յունական 600, կամ ուսական 125 ոտնաչափի:

**) Սատրապ—(«սատրապէս») կոչուում էր երկրի երկրորդ կառավարիչը, թագաւորի փոխանորդը, կամ երկրի որոշ մասի փոխարքան: Մի պետութեան մէջ կարող էին իշխել նոյն իսկ մի քանի Սատրապներ, կամ թէ մէկը միայն:

տայ»,—Գաթրճեան), Սորա և Արեւելեան—Հայաստանի սահմանը կազմում է՝ Մշոյ վտակը (Տեկերոս գետը):

Արեւմտեան Հայաստանի կառավարիչը, կամ «հիւպարխոսը», Դարեհ Հարճորդու և Արտաշէս Ուշեղի թագաւորութեան ժամանակ (425—400 թուականների ընթացքում) Տիրիբազն էր, որին լաւ յիշում է Քսենոֆոնը: Տիրաբազի իշխանութիւնը տարածւում էր նաև դէպի հիւսիս ու հիւսիս—արեւմուտք գտնուող երկրների՝ Բասենի և Սպերի վրայ: *)

Տիրիբազն ունէր իւր սեպհական զօրագունդը—անշուշտ Արեւմտեան-Հայաստանի հայերից: Նորա զօրքերի մէջ կային նաև վարձկան թաւրիւններ և Տաօխներ («Պալիւբայ քայ Տաօխոյ») — Պաղտեաց և Տայոց (Տայք) երկրների բնակիչներ: Տիրիբազի պալատը, որ գտնւում էր Եփրատի ափերի մօտ, իւր փարթամութիւնով ու ճոխութիւնով, գրեթէ ոչնչով, չէր զանազանւում մեծ թագաւորների արքունիքներից:

Տիրիբազն ևս, ինչպէս Օրոնտը, սիրելի է եղել արեաց արքային և վայելել է այն առանձնաշնորհը, որ երբ Տիրիբազն ներկայ էր լինում թագաւորի մօտ, բացի նրանից ոչ ոք չէր համարձակւում արքային ձի նստեանել: («Anabasis», IV, 4, 5:)

Դուցէ այդ պաշտօնն Արեւելքում մի առանձին և բարձր պատիւ է համարուել, որին թագաւորն արժանացրել է Տիրիբազին, սակայն այդ յայտնի չէ և չի կա-

*) «Anabasis»-ի VII, 8, 25-ից երևում է, որ թագաւորի երկիրը («հէ բազիլէոս խօրա») բաժանուած էր բազմաթիւ նահանգների, կամ իշխանութիւնների («արխոնտէս»): Այս բաժանումով Բասենի և Սպերի արխոնտը— («հօ արխոն ֆասիանոն քայ Հեսպերիտոն») Քսենոֆոնի ժամանակ վերջիւնեալ Տիրիբազն էր:

Տես նաև.— «Anabasis», IV, 4, 5—8 կային:

րելի պնդել: Նման սովորութիւն վերագրւում է նաև մեր Մեծն-Տիգրանին, որ ձի նստելիս չորս հպատակ թագաւորների էր ծառայեցնում: Ինչպէս երևում է, այս մի յատուկ սովորութիւն է եղել Արեւելքի միապետների համար, որոնք ամէն ջանք գործ էին դնում այդ և նման սովորութիւններով ծառայեցնել հպատակ թագաւորներին, որպէս զի դորանով հպատակ թագաւորներին աւելի ևս ճնշէին և իրենց աւելի բարձր, արքայաւայել դիրք տային:

Չը նայած այս հանգամանքին՝ Հայաստանի պէս ճոխութեամբ և առատութեամբ լցուած երկրի պետը չէր կարող հասարակ, պարզ կեանք վարել: Եւ իսկապէս՝ Տիրիբազի վրանում կային արծաթոտն սեղաններ, բաժակներ և առանձին հացարարներ ու տակառապետներ: Այս վերջին կարգի պաշտօնեաներ, ինչպէս յայտնի է Ս. Գրքից, եղել են նաև Եգիպտոսի փարաւոնների պալատներում: (Գիրք Ծննդոց, գլուխ 40): Ուրեմն Տիրիբազն ևս, ըստ ամենայնի, Արեւելքի պետի վայել և յատուկ ճոխութեան մէջ է եղել ապրելիս:

Հարկաւ այս բոլորն անգոր են ապացուցանելու, որ Տիրիբազն, ինչպէս արեւելեան ուրիշ շատ պետեր, նուիրուած է եղել միմիայն շոայլութեան, շուայտութեան, կամ կերութեամբ: Ընդհակառակը. ինչպէս Օրոնտը, նոյնպէս և Տիրիբազն երեւան է գալիս որպէս մի արթուն հովիւ, որ հսկում է իւր հօտի և երկրի բարօրութեան վրայ: Այս իսկ պատճառով, երբ իմանում է յոյների Արեւմտեան-Հայաստանի (այսինքն՝ իւր երկրի) սահմաններն անցնելը, զօրքով արշաւում է նոցա դէմ, որպէս զի զօրավարներին արգելք լինի աւելի ևս առաջ խաղալ: Սակայն Տիրիբազն թարգմանի միջոցով վերահասու լինելով վերջիններիս դիտաւորու-

թեանը, պայմանաւորուած և դաշն է կոչուած նոցա հետ: Այս գաշնադրութեան համաձայն ոչ Տիրիբազը յոյններին պիտի նեղացնէր, իւր երկրի միջով անցնելիս, և ոչ էլ յոյները պիտի այրէին, կամ աւերէին հայոց տներն ու գիւղերը: Միայն թէ յոյները հայերից պիտի վերցնէին այնքան պաշար, որքան որ նոցա հարկաւոր կը լինէր ճանապարհի ընթացքում:

Յոյներն, այնուհետեւ, շարունակուած են իրենց ճանապարհը երեք օր դաշտի միջով, տասնհինգ փարսախ, և հասնում եփրատի ափերին (Գաթրճեան, Ibid. եր. 342.), ուր էր արքայանիստը՝ («բազիլեյան») այժմեան Խնուս քաղաքը՝ իւր շրջակայ բազմաթիւ գիւղերով: Տիրիբազը, իւր զօրքերով, յոյներին հետևում է միայն 10 ստադիա, որպէսզի չը վրդովուի երկրի և ազգաբնակչութեան խաղաղութիւնը:

Երբ բոլոր զօրավարներն, իրանց զօրքերով, հասնում են այն գիւղն, ուր առաջուց արդէն գնացել, հասել էր զօրավար Խէյրիսոփոսը, վիճակով իրանց մէջ են բաժանում շրջակայ գիւղերը: Խէյրիսոփոսը մնում է նոյն գիւղում, իսկ միւս զօրավարներն, իւրաքանչիւրն իւր գնդով, քաշուած են վիճակով իրենց ընկած գիւղերը՝ գիշերելու և ապրելու համար:

Սակայն զօրավարներից մէկը, Պոլիկրատէս Աթենացին, չի բաւականանում խաղաղ կեանքով և, հակառակ իրանց գաշինքի տրամադրութեան, վերցնելով իւր պնդագօտիներին («էվծոնուս») յարձակում է վիճակով Քսենոֆոնին ընկած գիւղի վրայ, կախնաւորում և գերում բոլոր տներում եղող գիւղացիներին, գիւղապետին, սորա որդիներին և ինն օրուայ պսակուած աղջկան, («որի ամուսինը նապաստակ որսալու էր գնացել և գիւղում չը բռնուեց»): Պոլիկրատէս Աթենացին խլում է և 17 քուռակ, որոնք սնում էին իւր և հարկ

տրեաց արքային ուղարկուելու համար: Յոյների յանդերձնութիւնն այն աստիճանի է հասնում, որ, մինչև իսկ, չեն խնայում և թագաւորին՝ Տիրիբազին. կողոպտում են նորա վրանը և մարդկանց էլ գերի վարում:

Գ Ի Ի Ղ Ե Ր Ը

Գիւղերի տեղերը.—Տները.—Խմիչքները.—Իւղերը.—
Պաշարեղէնների առատութիւնը:

Քսենոֆոնը համեմատաբար աւելի լրիւ և արժէքաւոր տեղեկութիւններ է տալիս Հայոց—գլխաւորապէս Տարօնի—գիւղերի և սոցա տների մասին:

Այս տեղեկութիւններն այն տեսակէտից են ուշագրաւ, որ մեզ մօտաւոր դադափար են տալիս V. և IV դարերի հայերի կեանքի, ապրուստի, նիստու կացի և զբաղմունքների մասին, որպիսի պատմական նշխարներ չենք գտնում և ոչ մի տեղ:

Այստեղ ևս երևան է գալիս բնութիւն, լեռ ու ջուր սիրող, աշխատասէր հայը, որը միշտ ձգտում է շէնացնել և մշակել իւր մայրենի երկիրը: Որոշ չափով գաղափար ենք կազմում և հայ գեղջուկի նախնական, պարզ ճարտարապետութեան և հնարամտութեան վրայ:

Ինչպէս տեսանք, թէ Արևելեան և թէ Արևմտեան Հայաստանում կային բազմաթիւ մեծ ու փոքր, շէն ու աւեր գիւղեր, որոնց միջով անցնում էին յոյները: Մեծ գիւղերում նստում էին թագաւորները,—Արևելքում՝ Օրոնտը (յատկապէս ո՞ր գիւղում՝ շատ դժուար է որոշ ասել), իսկ Արևմուտքում, ամենայն հաւանականութեամբ այժմեան Խնուս քաղաքում, Տիրիբազը:

Մեծ գիւղերից, Արևելեան-Հայաստանում, նշանաւոր է եղել նաև սատրապանիստը: Միւս գիւղերը, որոնք կառավարւում էին իրանց պառնձին իշխաններով, կամ գիւղապետներով («քոմարխէս»), *) ցրուած էին երկրի զանազան կողմերում:

Այս մեծ ու փոքր գիւղերն, ըստ մեծի մասին, շինուած էին ջրառատ տեղերում, գետերի ափերին, և ամրացրած՝ բերդերով կամ աշտարակներով: Ինչպէս տեսանք, գիւղեր եղել են և Արևելեան Տիգրիսին (Գետաբիտէս գետին) մօտիկ դաշտի վրայ, սակայն դժբաւեւրուել են Կորդուաց դէմ մղուած պատերազմների ժամանակ: Բաղմաթիւ գիւղեր եղել են նաև Մշոյ վտակի (Տելքերաս գետի) ափերի վրայ, Խնուսի շրջակայքում (Արևելեան-Հայաստանում) և այլ զանազան տեղեր, բլրաւորապէս այն ճանապարհի շուրջը, որով յոյներն էին անցնում:

Որովհետև այդ գիւղերը թշնամիների կողմից միշտ ենթակայ էին լինում ամեն տեսակ ասպատակութիւնների, կողոպուտի ու յափշտակութեան, ինչպէս օրինակ՝ անում են Քսենոֆոնի իշխանութեան տակ եղած զօրքերը, պարզ է, որ պէտք է շինուած լինէին ամուր տեղերում, լեռների վրայ: Մեծ գիւղերն, ինչպէս երևում է, ունեցել են ամրութեան ու պաշտպանութեան համար շինուած բերդեր, կամ թէ շատ տըների վրայ եղել են աշտարակներ, ինչպէս սատրապանիստ գիւղում (Արևելեան-Հայաստանում):

Առանձնապէս հետաքրքրական է և ուշագրաւ տըների նկարագիրը: Այս կտորը մեզ համար շատ թանգազին է և մեծարժէք, որովհետև՝ չունինք ուրիշ ա-

*) Գուցէ այժմեան «գալաւա»-ներն են, կամ սոսկ գիւղական տանուէրներին համապատասխան:

ւելի հին նկարագրութիւն, որով կարողանայինք գաղափար կազմել այն յարկի մասին, որի տակ հայ գեղջուկն անց էր կացնում իւր թէ՛ տիսուր և թէ՛ երջանիկ օրերը, ուր նա իւր աշխատակից կենդանիների հետ միասին՝ աշխատանքից յետոյ՝ հանգիստ էր առնում և ուր նա պահպանում էր իւր սեպհականութիւնը, — քան այս համառօտ, սակայն խիստ ամփոփ, սեղմ նկարագրութիւնը:

Եթէ այդ նկարագրուած տների հետ համեմատելու լինինք ներկայումս Շիրակում, Արարանում և ուրիշ հայկական գաւառներում գտնուող բաղմաթիւ գիւղերի տները, կամ «օղա»-ները, որոնք նոյն դերն են կատարում, ինչ կատարում էին Քսենոֆոնի նկարագրածները, կը տեսնենք, որ հայ գեղջուկի տունը, գրեթէ, նոյնն է մնացել, ինչ եղել է դեռ այդ խաւար ու մութ դարերում: Իսկ թէ, ինչ հանգամանքներ են նպաստել հայ գեղջուկին մնալ ու զարգացման նոյն աստիճանի վրայ, ինչ աստիճանի վրայ որ եղել է նախնական դարերում. — հարցի պատասխանն, անշուշտ, պատմական կեանքի զանազան աննպաստ պայմաններում պէտք է որոնենք:

Տան նկարագրին զուգընթաց Քսենոֆոնը («Anabasis», VI; 5, 25—27) նկարագրում է նաև մի նոր տեսակ, զարուց պատրաստած խմիչք, որի մասին այժմ, նոյն իսկ, գաղափար անգամ չունինք, և հազիւ թէ կարելի լինի այդ համեմատել ներկայումս Հայաստանում կամ այլ երկրներում եղած խմիչքներից մէկն ու մէկի հետ: Քսենոֆոնի նկարագրութիւնից երևում է, որ այդ խմիչքը Հայաստանում շատ տարածուած, ընդունուած և սիրելի է եղել սովոր մարդկանց համար: Բայց, որովհետև այժմ չունինք այդպիսի խմիչք և ոչ մի տեղ, շատ դժուար է ընդու-

նել, թէ այդ նոյն խմիչքն է, ինչ որ ներկայիս գարեջուրը, ինչպէս կարելի է կարծել, 'ի նկատի ունենալով նկարագրութիւնը: Դա մի բոլորովին այլ, նոր տեսակի և յատկութեան, ուրոյն խմիչք է: Միջոցաւ մեր գիւղացիները դեռ մինչև հիմա էլ չգիտեն, թէ ինչ բան է գարեջուրը, ինչ համ ունի, սև՞ է, սպիտակ է:

Ահա, թէ ինչպէս է նկարագրում Քսենոֆոնը հայ գեղջուկի պարզ, անպաճոյճ տունն ու սիրելի խմիչքը:

«Տները ստորերկրիայ («կատապէյեոյ») էին. բերանները ջրհորի բերանի նման. բայց ներքէն ընդարձակ էր և միայն կենդանիների համար էր մուտք փորուած. իսկ մարդիկ՝ վերեւից ներքէն իջնում էին սանդուխքներով*): Տները մէջ կային այծեր, ոչխարներ, եղջեր, հաւեր և սոցա ճուտերը: Ներսէ եղած կենդանիները շատ խոտ էին ուտում: Բայց կար նաեւ ցորեն, գարի, ընդգէշներ և կարամներով՝ գործուէ պատրաստած՝ զինի (խմիչք): Պարիները (ջրի) վերան լողում էին: Դրուած էին մեծ ու փոքր եղէգներ, որոնք ծուկեր չունէին: Եթէ մէկն ուզենար գինի խմել, եղէգները պիտի գնէր բերնին և ծծէր: Այս խմիչքը շատ դառն էր, եթէ անապակ էիր խմում. իսկ սովոր մարդու համար շատ քաղցր՝ ախորժիկի խմիչք էր»:

Հայ գեղջուկը, բացի այս՝ մեզ համար բոլորովին անծանօթ, նոր խմիչքը, ունէր նաև հին ու անուշահոտ զինի, որ պահում էր կարասների մէջ, հողի տակ թաղած:

Խմիչքներից զատ՝ յոյները, իրենց ատտիկական սովորութեան համաձայն ձէթով օծուելու համար, Հա-

*) Այս մասին տես՝ Փարսական Տէր-Մովսիսեանի «Հայ գիւղական տունը», թարգմ. հ. Բ. վ. Պիլէզիկ-ձեան, Վիեննա, 1894 թ., հետաքրքրական ուսումնասիրութիւնը:

յաստանում ճարում են մեծ քանակութեամբ զանազան տեսակ իւղեր. ինչպէս օրինակ՝ խողի իւղ (ճարպ), բնջիւթ (կտաւահատի իւղ), դառն նշից ու բւենից մզուած իւղ և մրտենու իւղ («միւռոն»):

Կայ մի նշանաւոր հանգամանք, որ առանձին կերպով, մի քանի անգամ է շեշտում Քսենոֆոնը. այդ՝ Հայաստանի (թէ Արևելեան և թէ Արևմտեան) գիւղերի լիութիւնն ու պաշարի առատութիւնն է, որից և ազահութեամբ, առատօրէն էին օգտուում յոյն զինուորները: Այդ պաշարեղէններն էին՝ մսացու, ցորեն, հին ու անուշահոտ զինի, չամիչ և զանազան տեսակ ընդգէշներ: Միևնոյն սեղանի վրայ՝ գարուց և ցորենից թխած հացով՝ յոյները վայելում էին ոչխարի, այծի, խողի, հորթի և հաւի մսից պատրաստած տեսակ-տեսակ խորտիկներ, հարկաւ, անուշահոտ գինին էլ հետը վայելելով:

Ուրեմն, իսկապէս, Հայաստանը եղել է մի լիառատ, բազմաբերան երկիր: Այս կէտը կրկին ապացոյց է հայ գիւղացու աշխատասէր, տոկուն ու համբերող ոգի ունենալուն, որով նա մինչև օրս էլ մշակում է իւր երկիրը, արտն ու անդաստանը, պահում ընտանի կենդանիները: Ամենայն առատութեամբ օգտուում էր հայը իւր երկրի յիշեալ բարիքներից և օտարների համար էլ բաժին հանում:

Գ Ի Ի Ղ Ա Յ Ի Ն Ե Ր Ը

Գիւղացու կրօնը.—Ներքին ընտանեկան կեանքը.—Հարկը.—Պարապմունքները.—Բնութեան դէմ կռուելու հնարամտութիւնը:

Մի ժողովրդի մասին խօսելիս, որքան էլ անդար-պացած լինի նա, անշուշտ, նախ պէտք է 'ի նկատի

առնել այդ ժողովրդի կրօնական-բարոյական կեանքը, աշխարհայեցողութիւնը, այսինքն՝ թէ նա ի՞նչպիսի աստուածներ ունի, ի՞նչպէս է հաւատում և վերաբերուում դէպի այդ աստուածները, ի՞նչպիսի պաշտամունք է կատարում դոցա համար և այլն.—հարցեր, որոնց պատասխանը նախնական դարերի հայերի կեանքի նկատմամբ շատ և շատ հետաքրքրական է: Սակայն, զժբաղդաբար, շատ քիչ բան գիտենք այդ բոլորի մասին և այնքան քիչ, որ, համարեա թէ, կարելի է ասել, ոչինչ չը գիտենք:

Արդարեւ՝ այդ հարցերի պատասխանը բաց կանէ մեր առաջ այն հրապարակը, որի վրայ պարզապէս կերևայ, թէ ժողովուրդը իւր ներքին, հոգեկան, կրօնական—բարոյական որոշ պահանջներին ի՞նչպէս է բաւարարութիւն տուել հնում:

Հարկաւ՝ հայ ժողովուրդն ևս, որպէս մի կազմակերպուած համախմբութիւն, մի իրաւական ամբողջութիւն, միութիւն պիտի ունենար, և ունի իւր հոգեկան որոշ պահանջները, որոնց բաւարարութիւն տալ կարողանում է նա միայն կրօնով:

Նախնական դարերի հայի կրօնի վերաբերեալ մի շատ թանգագին յիշատակութիւն ունենք Քսենոֆոնի երկի մէջ: Այդ յիշատակութիւնը (թէ և շատ անշան ու թերի) սակայն առաջինը, միակն ու գնահատելին է և վերաբերում է շատ հին ժամանակների: Այդ ժամանակներից առաջ և յետոյ մինչև III, II, դար (Քր. առ.) նման դրաւոր տեղեկութիւն և գաղափար իսկ չունենք հայոց հին կրօնի և աստուածների մասին, բացի Ագաթանգեղոսի տուածները, արդէն V դարում (Քր. յետոյ):

Առանց Քսենոֆոնի այսքան է յայտնի մեզ, որ արեգակը—որպէս արական սեռի աստուած, լուսինը—իգական աստուածութիւն—«կրակ քոյր»՝ և աստղերը

հայերի համար, դեռ անյիշատակ ժամանակներից, կրկրպագութեան ու պաշտամունքի առարկաներ էին: Արեգակի պաշտամունքն այնքան խոր արմատներ էր գցել հայերի մէջ, որ «Արեորդի»-ները դեռ ևս քրիստոնէութեան դարերում, երկար ժամանակ, շարունակում էին իրանց ծէսերը, չնայած, որ քրիստոնեաները մեծ հալածանքներ էին յարուցանում դոցա դէմ: Արեգակի պաշտօնի ուժեղ արտայայտութիւնների հետքերը երևում են և եկեղեցական գրականութեան մէջ: Շաբաթականի մէջ ոչ-ստէպ պատահում են «Արեգակն արդարութեան» և այլ նման «արեգակ»-ով արտայայտութիւններ, որոնցով քրիստոնեայ հեղինակները բռնորոշում են Աստծուն կամ Քրիստոսին:

Վերջապէս չպէտք է մոռանալ և այն, որ դէպի արեգակը, որպէս մեծ լուսատու և ջերմատու բարերարի, հայ գիւղացին մինչև այժմ էլ մեծ յարգանքով է վերաբերում: Շատ տեղերում նոյն իսկ գիւղացիներն առաւօտեան արեւածագին, դէպի արեւելք դարձած, խաչ են հանում երեսներին, նոյնը և նոր ծնած լուսնի նկատմամբ, որ, անշուշտ, նախկին պաշտամունքի հետեանք-մնացորդ է:

Ըստ Քսենոֆոնի՝ հայերն Արեւմտեան-Հայաստանում ունեցել են տրեղակի պաշտամունք, որ կատարուել է զոհաբերութիւնով, և յատկապէս մի է զոմ բերուել: Քսենոֆոնն այս բանը լսած լինելով՝ իւր ծերացած ձին, որ արդէն փչացել էր երկար ճանապարհ գնալուց, ի վարձատրութիւն, տալիս է գիւղապետին, որ սա կերակրէ, պարարտացնէ այն և զոմ բերէ տրեղակին: Իսկ ինքը վերցնում է իբրև հարկ բուծուող քուռակներից մէկը և մի-մի հատ էլ դոցանից ընծայում զօրավարներին ու վաշտապետներին: Մեզ համար, ուրեմն, արժէքաւոր յաւելում է այնքանը, որ արեւի պաշտօնը

հայերը կատարում էին յատկապէս ձիու զոհաբերութիւնով: («Anabasis», IV; 5, 35):

Շատ հետաքրքրական կը լինէր իմանալ, թէ՞ արդեօք, այս վերջին ձեռն պաշտամունքը Հայաստանի բոլոր նահանգներում էր կատարւում, թէ՞ որոշ մասերում միայն, կամ թէ յատուկ վայրերում: Այս մասին ոչինչ չեն աւանդում մեզ ոչ Քսենոփոնը և ոչ էլ ուրիշները: Սակայն 'ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հին Հայաստանում կային մարդիկ, որոնք իրենց կրօնական պաշտամունքի անունով կոչւում էին «Արեւի—որդիք» կամ «Արեւորդիք», կարելի է ենթադրել, որ ձիու զոհաբերութեամբ արեւի պաշտամունքը կատարողները եթէ առանձին կարգի ժողովուրդ չեն, գոնէ Հայաստանի որոշ նահանգի կամ գաւառի բնակիչներ են: Իսկ թէ սոքա նոյն այդ «Արեւորդիք»-ն են, թէ մի այլ ժողովուրդ, կամ նոյն ինքն հայերը, այդ դժուարանում ենք դրականապէս ասել:

Ինչպէս էր հայի ներքին, ընտանեկան կեանքը.—այս ևս որոշ չենք տեսնում Քսենոփոնի բեկորներից, թէև կան դորա վերաբերեալ մի քանի հատուկ տղայի յիշատակութիւններ:

Ներքին կեանքի երևոյթներից օրինակ՝ յիշում է պատկը, կամ ամուսնութիւնը: Նւ ապա մի գլխաւոր հանգամանք, որ բնաւ չը պէտք է անտես անել: Ինչպէս Քսենոփոնի նկարագրութիւնից երևում է, հայ աղջիկն ու կինը հին դարերում չեն եղել այն հարեմական, փափուած, կաշկանդուած գրութեան մէջ, ինչպէս յետոյ, հաւանօրէն, մահմեդական ազդեցութեան տակ. այլ՝ հայ կինն ու աղջիկը եղել են աւելի ազատ, քան նոյն իսկ ներկայումս են մեր գիւղերում: Սոքա համարձակ կերպով խմբով գնում են գիւղից դուրս՝ բերդի դիմաց գտնուող աղբիւրից ջուր բերելու:

Այսքանն արդէն ցոյց է տալիս, որ, ինչպէս միշտ, նոյնպէս և հին դարերում, տան ներքին բարեկարգութիւնն ու կառավարութիւնը, ինչպէս են օրինակ՝ ջուր բերել, տուն մաքրել, սեղան պատրաստել ևայլն, տան տիկնոջ և աղջկայ պարտականութիւնն է եղել:

Հայ գեղջկուհիներն աներկիւղ դիմում են օտար զինուորներին հարցնելով, թէ ո՞վ են դոքա և իրենց ստացած պատասխանին իրենք էլ նորից պատասխանում:

Այս խօսակցութիւնը տեղի է ունենում դուրսը, ազատ դաշտի վրայ և պարսկերէն: («Anabasis», IV; 5, 9—10):

Թէ ինչո՞վ կարելի է բացատրել հայ գիւղջկուհու քաջ պարսկերէն խօսելը, այդ, կարծում ենք, այնքան էլ դժուար չէ:

Գուցէ հէնց այն պատճառով, որ պարսից տիրապետութեան տակ էին գտնւում և իրենցից պահանջւում էր, անպայման կերպով, պարսկերէն իմանալ և խօսել: Այս կարծիքն այնքան էլ անհաւանական չի լինի, եթէ 'ի նկատի ունենանք անցեալում իշխող մի շարք բռնակալ պետերի նոյն դիտաւորութեամբ դէպի իրենց ստորադրեալներն ունեցած վարմունքը: Օրինակ՝ մեր Արամ Նահապետը, ըստ Խորենացու աւանդութեան, սպառնում էր կտրել Մաժակի (Կեսարիոյ) բնակիչ այն յոյնի լեզուն, որը կը համարձակուէր իւր մայրենի լեզուով խօսել և այլն: Բայց թէ հայ գիւղացիները միմիայն պարսկերէն էին խօսում, (թէ դուրսը և թէ տանը), թէ՞ հայերէն էլ էին խօսում, շատ դժուար է եզրակացնել Քսենոփոնի, էին մեծ պատմիչների յատուկ, լակոնական, սեղմ ոճից:

Գալով հարկահանութեան խնդրին, պէտք է ասել, որ հայ գեղջուկն 'ի նշան հպատակութեան՝ պարսից

արքայի համար, իբրև հարկ, սնուցանում և մի առանձին խնամքով պահում էր Հայաստանի ընտիր նոթոյգներին: Սոքա թէև փոքր էին, քան պարսկականները, սակայն շատ աւելի տոկուն ու աշխոյժ էին և առանձին հսկողութեան տակ բուծւում ու արածում էին արօտներում, ապա միայն պատշաճաւոր եղանակով հայոց կողմից ուղարկւում պարսից արքունիք: (Եւս' Գաթրճեան), «Տիեզերական պատմութիւն», հատոր 1, երես 340):

Ինչպէս ամեն երկրում, նոյնպէս և Հայաստանի գիւղերում մեծ տեղ պէտք է բռնէին գիւղական պարագմունքները, որոնց մասին նոյնպէս շատ բան չունինք Քսենոֆոնից աւանդուած: Ի նկատի առնելով ընդեղէնների առատութիւնը, կարելի է, ըստ ամենայն հաւանականութեան, ենթադրել, որ, ինչպէս միշտ, նոյնպէս և այդ նախնական դարերում հայ գիւղացու,—այն գիւղացու, որը, դարերից ի վեր, դեռ ևս սերտ կապերով է կապուած իւր մայրենի երկրի և նորա մշակութեան գործի հետ,—ամենամեծ և գլխաւոր պարագմունքը եղած պիտի լինի երկրագործութիւնը և առ հասարակ դաշտային աշխատանքը: V, IV դարերի հայ գեղջուկը, որ յոյն գինուորներին առատութեամբ ցորենի և գարու հաց էր մատակարարել, զբաղւում էր, գլխաւորապէս, սուրբ արհեստով: Հետեւաբար, որպէս զի կարողանար զբաղուել այդ արհեստով, նա բազմացնում էր իւր մշտական աշխատակից և օգնական ընտանի կենդանիները, որոնց յատուկ հոգատարութեամբ խնամում ու պահում էր իւր տանը և երբեմն էլ զբաղւում խաշնարածութեամբ:

Բնութիւն, ազատութիւն ու գործ սիրող հայ գիւղացին, երբ ազատ էր լինում վերոյիշեալ պարագմունքներից, զուարճանում էր որսորդութիւնով, որսա-

լով նապաստակ և ուրիշ կենդանիներ, որոնցով լիքն էին Հայաստանի անտառներն ու լեռները:

Այս բոլորով ևս չէր կարող բաւականանալ հայ գեղջուկը: Նա ունէր իւր ազատութեան և ուրախութեան որոշ ժամերը: Ինչո՞վ պիտի կարողանար անցկացնել նա իւր այդ ժամերը, եթէ ոչ զուարճանալով, երգեր յօրինելով և գինի խմելով, ինչպէս այժմ: Ահա նա պարապում է և խմիչքներ պատրաստելով, գինի և զարուց պատրաստած խմիչք կայն: Բայց թէ ի՞նչ եղանակով էր նա պատրաստում այդ բոլորը, չը գիտենք. պարզ է, միայն, որ պիտի լինէր ամենանահապետական, նախնական պարզ եղանակով և պրիմիտիւ գործիքներով:

Հայ գիւղացին չի կարողացել անտես անել նաև իւր զանազան կարիքների համար հարկաւոր բազմատեսակ իւղերը և դոցա պատրաստելու գործը: Այդ իւղերի տեսակներն արդէն թուած է վերևում:

Մի խօսքով՝ հայը աշխատել է իւր երկիրն այնպէս մշակել, այնպիսի գործերով զբաղուել և այնպիսի մեծ բարիքներից օգտուել, որ օտարն իրաւամբ կարող էր հայի երկիրն անուանել, բառի բուն իմաստով վերցրած, լիութեան և առատութեան երկիր:

Կանայք էլ, արդեօք, բացի իրանց տնային գործերից, զբաղւում էին յիշեալ ծանր գործերով՝ ինչպէս — երկրագործութիւն, խաշնարածութիւն, որսորդութիւն, խմիչքներ ու իւղեր պատրաստել կայն, օգնում էին իրանց ամուսինների ու ծնողների դաշտային աշխատանքներին,—չը գիտենք: Բայց չենք դժուարանում ենթադրել, որ ճիշտ այնպէս եղած լինէր, ինչպէս որ ներկայումս է. այսինքն՝ որքան որ այդ նոցա կանացի թոյլ ուժերն ու իւր կարգին բազմատեսակ ըզբաղմունքներն էին ներում:

Կարելի է ասել, ուրեմն, որ, շատ աննշան տարբերութեամբ, նախնական դարերի հայոց գիւղն ու գիւղացին, ըստ ամենայնի, նոյն է եղել և նոյն զբաղմունքներն է ունեցել, ինչ որ այժմս են և այժմ ունին:

Չը պէտք է աչքաթող անենք և մի շատ հետաքրքրական, մեծ ուշադրութեամբ և խնամոտ զգուշութեամբ յիշատակուած հանգամանք: Հայ գիւղացին ոչ միայն ընդունակ ու կարող է եղել կռուելու իւր թշնամիների հետ, նոցանից պաշտպանուելու համար գիւղերը բերդերով և տներն աշտարակներով ամրացնելու, այլ՝ նա ընդունակ ու կարող է եղել կռուելու նաև բնութեան ու նորա ահաւոր տարերքների դէմ, ամենատարրական միջոցներով: Այս բանին, անշուշտ, նպաստած կը լինէր ինքը երկիրը, նորա գիւղքն ու բնութիւնը: Ուստի գիւղացին, բնական ճանապարհով և դարաւոր փորձերով, գտնում ու սովորում է բնութեան երևոյթների դէմ կռուելու հնարներն ու միջոցները: Օրինակի համար.—Երբ որ Քսենոֆոնը գիւղից հեռանում էր՝ գիւղապետը նորան սովորեցնում է, թէ ճանապարհին պէտք է ձիերի և գրաստների ոտներին քսակներ կապել, երբ ստիպուած են ձիւնի միջով գնալ. որովհետև առանց քսակների ձիերը մինչև փորները խրոււմ էին ձիւնի մէջ, որով արգէն այն ժամանակ—404 թ. նոյեմբ.— ծածկուած էին Հայաստանի լեռներն ու դաշտերը:

Այս օրինակը մի գեղեցիկ ու պերճախօս ապացոյց է հայ գեղջուկի բնութեան դէմ կռուելու և հնարամտութեան ընդունակութեան:

ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունուած կարծիքը սխալ է.—Յոյն զօրավարների բոլոր թիւաները.—Հայերի զուգութիւնը.—Հիւրընկալութեան նկարագիրը.—Եզրակացութիւն:

Անցնենք ամենակարեւոր խնդրին—հիւրասիրութեան:

Երևի հէնց այն ժամանակուանից, երբ սկսել են կարգաւ Քսենոֆոնի երկը, մինչև այժմ, թէ օտարադ-գիւղացիների և թէ հայերի մէջ տիրել, տարածուել և ընդունուել է այն թիւը կարծիքը, թէ Քսենոֆոնը մի գտնում է այն թիւը կարծիքը, թէ Քսենոֆոնը մի առանձին բերկրանքով նկարագրում է հայ գիւղացիների այն մեծ հիւրասիրութիւնը, որ նոքա ցոյց են տուել յոյն զօրքերին:

Սակայն, եթէ, իսկապէս, ուշի ուշով հետեւելու լինենք «Anábasis»-ի պատմութեան ընթացքին, յատկապէս՝ հայերի մասին պատմած կտորներին, մանաւանդ, այն կտորին, ուր նկարագրուած է հիւրընկալութիւնը, կը տեսնենք, որ հայերի սիրալիր հիւրասիրութիւնն այն ձևով, ինչով որ այդ ընդունուած է, մինչև այժմ, չի եղել և չի էլ կարող եղած լինել:

Փակագծի մէջ նկատենք, որ մեր նպատակը չէ ապացուցանել, թէ հայը երբեք հիւրասէր չի եղել և չէ: Հայի հիւրասիրութիւն՝ դա մի այնպիսի անուրանալի իրողութիւն, մի մեծ ճշմարտութիւն է, որ նոյն իսկ մեր օրերում կարող ենք ապացուցանել, եթէ երբ և իցէ առիթ ունենանք պատահելու հայ գեղջուկին իւր նուիրական օջախում, սիրելի յարկի տակ:

Ուստի շեշտում ենք.—Քսենոֆոնը «Anábasis»-ում հիացմունքով նկարագրում է ոչ թէ հայերի հիւրասիրութիւնը, այլ իրենց՝ յոյների յոյներին ցոյց տուած հիւրասիրութիւնը:

Բայց ի՞նչ հնարքներով ու միջոցներով է կատար-

ուել այդ հիւրասիրութիւնը. ահա թէ ինչպէս:

Փորձենք փաստացի ապացուցանել մեր ասածը. դորա համար պէտք է 'ի նկատի ունենալ հետեւեալ ոչ-պակաս նշանակութիւն ունեցող հանգամանքները:

Նախ՝ յոյներն, ինչպէս տեսանք, որոշ պայմանով, դաշնադրութիւնով մտան Հայաստան (Արևմտեան): Բայց նոքա, իրանց վարմունքով, գնացին բոլորովին հակառակ դաշինքի տրամադրութեան. մինչև իսկ յանդըհ-նութիւն ունեցան իրանց դաշնակից Տիրիբազի վրանքը կողոպտել, նորա ունեցած արժէքաւոր իրերը յափըշտակել և սպասաւորներին գերել:*)

Երկրորդ՝ երբ արդէն յոյների յաւակնութիւնն այն աստիճանի էր հասել, որ նոքա անպատիժ թագաւորի վրանն էին կողոպտում, ի՞նչ պիտի եղած լի-նէր խեղճ գիւղացի ժողովրդի դրութիւնը, ի՞նչ-պէս պիտի կարողանար ազատուել նա վերահաս բռնութիւնից: Եւ իրօք, վերոյիշեալներով ևս չբաւարանալով, ինչպէս տեսանք, Պոլիկրատէս Աթենացին իւր պնդագոտիներով յարձակում է այն գիւղի վրայ, որ վիճակով ընկել էր Քսենոֆոնին, և կալանաւորում, գերում է բոլոր տներում եղողներին, նոյն իսկ գիւղապետին, սորա տղաներին, նորապսակ աղջկան և այլն: Արդ՝ ի՞նչպէս պիտի վարուէր անպաշտպան հայ գիւղացին, եթէ ոչ, յունաց պատճառած այսչափ անօրէն վարմունքներից յետոյ, նեղուէր, ճնշուէր ու գերուէր:

*) Թէպէտ կրկին հայի սիրալիք հիւրասիրութիւնը երևում է հէնց այն հանգամանքից, որ Տիրիբազը, կամ հէնց Օրոնտը, թոյլ են տալիս յոյներին անցնել իրանց երկրի միջով և օգտուել պաշարեղէն-ներից, որքան որ նոցա հարկաւոր կը լինէր, միայն ճանապարհի համար, սակայն և այնպէս դորանով ևս չի վերջանում բուն խնդիրը, որ յետոյ է կատարուում:

Այսպէս գերութիւնը շարունակում էր այն գիւղերում, ուր յոյներ կային: Չը մոռանանք, որ այս բոլորը պատմողը նոյն ինքն Քսենոֆոնն է:

Երրորդ՝ այսքանով էլ չեն բաւականանում յոյները: Որպէս զի պարսից արքայի ուշադրութիւնն ու բարկութիւնը դարձնեն հայերի վրայ և սոցա դնեն աւելի նեղ ու անելանելի դրութեան մէջ, խլում են և իրանց վերցնում ափն քուռակները, որոնք իբրև հարկ մնում էին պարսից արքունիք ուղարկուելու համար: Այս ա-նիրաւութեան առաջին օրինակն էլ ինքը Քսենոֆոնն է տալիս:

Այս բոլորից յետոյ հարց ենք տալիս ընթերցողին. — ի՞նչ սրտով, ինչո՞վ և ի՞նչպէս կարող էր տանջուած, կողոպտուած ու գերուած հայ գիւղացին հիւրասիրել յոյներին: Ասացէք խնդրեմ, կարո՞ղ է, միթէ, մէկը իւր չունեցածով պատուել մի ուրիշին, կամ՝ կարո՞ղ է կողոպտուածը իւր կողոպտիչին հիւրասիրել այն բանով, ինչ խլել, տար՝ և են իրանից: 'Ի հարկէ—ոչ: Գուցէ կառարկուի, թէ ո՞ր բոլոր հայերը չէին այդ թշուառ դրութեան մէջ: Չճմարիտ է, կը պատասխանենք մենք, թէ և բոլոր հայերը չէին և չէին էլ կարող լինել այդ թշուառ դրութեան մէջ, սակայն հիւրասիրութիւնը տեղի էր ունենում հէնց այն գիւղերում, ուր կային յոյն ղինուորներ, այն հայ գիւղերում, որոնց բնակչութիւնը կողոպտուած, գերուած տանջում էր:

Իբրև ասուածներ, — այսինքն՝ թէ յոյներն ամէն բան արել ու անում էին ուժով, բռնութեամբ, — լրումն ու ապացոյց՝ յիշենք և հետեւելու: Երբ Քսենոֆոնը գերի գիւղապետին իւր մօտ՝ ճաշի է հրաւիրում, խոստա-նում է վերջնիս վարձատրել՝ առատ պաշարեղէնով և արձակել իւր ընտանիքի բոլոր գերուած անդամներին հետ միասին, եթէ միայն գիւղապետը համաձայնի լաւ

առաջնորդ լինել, մինչև որ յոյները դուրս գան հայոց երկրի սահմաններից և մտնեն ուրիշ ժողովրդի մէջ: («Anábasis», IV; 5, 26—27):

Ուրեմն՝ գիւղապետը բռնի հարկադրուած էր առաջնորդելու այն յոյներին, որոնք իւր և իւր համազգիների տներն ու գիւղերը քար-քանդ էին արել: Բնական է, որ գերի գիւղապետը, ի սէր իւր և ի սէր իւրայինների, չէր կարող և պէտք էլ չէր, որ հակառակ գնար Քսենոֆոնի և յոյն զօրավարների կամքին: Ուստի, իբրև վարձ իւր երախտիքների, առաջարկուում է գիւղապետին՝ ընտրել ինչոր ինքն է ցանկանում: Իսկ նա ի՞նչ աւելի լաւ բան կարող էր ցանկանալ և ընտրել, քան, գէթ, իւր ազգական գերիներին ազատել յոյների ձեռից, ինչպէս նա խնդրում է այդ Քսենոֆոնից և յոյն զօրավարներից: Սակայն նորա խնդիրը յարգուում, կատարուում է, թէ ոչ, Աստուած միայն գիտէ, այդ գոնէ չի երևում Քսենոֆոնի պատմութեան շարունակութիւնից: Այս բոլորն անհերքելի կերպով երևան են հանում յոյների հոգու՝ նենդ, լսարգալս ու լսաբերայ, իսկ հայերի—միամիտ, սրտաբաց, անկեղծ ու հիւրընկալ գծերը:

Չը պէտք է մոռանալ, որ այս իրողութիւններն ու փաստերը բոլորն ինքը Քսենոֆոնն է տալիս մեզ: Իսկ թէ ի՞նչ ուրիշ աւելի անօրէն բաներ կը լինեն կատարած յոյն զօրավարները, որ նա չի նկարագրում, այլ ևս անհնարին է ենթադրել:

Արդ՝ տեսնենք, թէ ի՞նչպէս է նկարագրում այդ հիւրասիրութիւնը ինքը պատմագիրը: Միջանկեալ նկատենք, որ, ինչպէս վերևում էլ տեսանք, իւրաքանչիւր զօրավար վիճակով մի գիւղ վերցրել էր իրեն և իւր զինուորներով քաշուել այնտեղ: Այժմ զօրավարները, իրանց զինուորների հետ միասին, գնում են

միմեանց մօտ տեսակցութեան և փոխադարձաբար հիւրասիրում իրար, գերի հայ գեղջուկի հաշուով:

Նախ՝ Քսենոֆոնը գնում է Խէյրիսոֆոսի մօտ:

Ահա այդ կտորը ամենահարազատ թարգմանութեամբ.— («Anábasis», IV; 5, 30—34):

«Հետեալ օրը Քսենոֆոնն առնելով գիւղապետին գնաց Խէյրիսոֆոսի մօտ: Ուր որ գիւղ էր մտնում (ի հարկէ՝ ուր յոյն զինուորները կային), դնում էր իրանցից վիւղում եղողների մօտ ևւ (Քսենոֆոնն) ամէն տեղ (նոցա) դնում էր բարեկեցիկ ևւ քաջալերուած: Եւ ոչ մի տեղից (յոյները) բաց չէին թողնում (անշուշտ՝ Քսենոֆոնին և նորա ջրախմբին) մինչև որ մատուցանում էին նոցա՝ կերակուրներից ամենալաւերը: Եւ ոչ մի տեղ չկար, որ միւսնոյն սեղանի վրայ (յոյները) չմատուցանէին ոչխարի, այծի, խոզի, հորթի եւ հաւի միս, ցորենից ևւ զարուց թխած առատ հացով: Եւ երբ մէկը բարեկամաբար կամենում էր խմել ընկերոջ կենացը, տանում էր նորան կարասի մօտ (կանգնեցնում), իսկ ինքը կռանում և եղի նման ներս էր քաշում գինին»:


Շատ հասկանալի է, որ այսքան առատ պաշարեղէնները յոյն զօրավարները կարող էին ձեռք բերել միայն և միայն կողոպտուած հայ գիւղերից՝ գերուած գիւղացիների տներից: Որովհետև, կարծում ենք, ոչ ոք,—լինի այդ հայ, թէ օտար գիւղացի,—չէր կարող իւր յօժար կամքով բանալ յոյն որկրամուլ զինուորականների առաջ նկարագրուած չափով ճոխ սեղան, եթէ, միայն, այդ նիւթերը գողացուած, կողոպտուած չլինէին, ինչպէս այս գէպըում, պատմագրի վկայութեամբ: Կասկած չի կարող լինել, որ, այդ հնագոյն դարերում, ոչ մի գիւղացու,—որքան էլ որ նա ունեւոր լինէր,—ուժը չէր պատի քաղցած զօրագուհիներ կերակրել: Այս շատ պարզ է:

Հիւրասիրութեան վերոբերեալ կտորը թէպէտ (շատ աննշան չափով) մութն է պատմութեամբ, սակայն պատմութեան թելից, մտքից և քերականական կազմութիւնից ակներև է, որ ամբողջապէս վերաբերում է յոյներին, և այդտեղ ոչ մի խօսք չկայ հայերի մասին:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ, եթէ չափազանց չի լինի ասել, այդ սխալ եզրակացութեան յանգիլ են մարդիկ միմիայն նոյն պատճառով, որ ուշագրութիւն չեն դարձրել նախորդ գէպքերի պատմութեան և յիշեալ կտորի քերականական կազմութեան ու մտքի վրայ: Այլապէս, եթէ 'ի նկատի ունենանք վերոյիշեալ բոլոր հանգամանքներն ու փաստերը և այս վերջին ամենակարևոր կտորը, մեզ համար միանգամայն ընդունելի կը լինի, որ յոյներն են յոյներին հիւրասիրողները և ոչ թէ հայերը — յոյներին, ինչպէս կարծւում է դեռ մինչև այսօր, նոյն իսկ մասնագէտ յունաբանների կողմից:

Ուրեմն՝ Քսենոֆոնը նկարագրում է, թէ ինչպէս մի յոյն դօրավար իւր իշխանութեան տակ գտնուող հայ գիւղերից կորդած կողոպուտով հիւրասիրում էր միւս յոյն դօրավարին ու նորա շրախմբին, և այսպէս փոխադարձաբար:

Ափսոս, որ աւելի մանրամասնութիւններ չունինք այս խիստ հետաքրքրական խնդրի վերաբերմամբ:



Գ Ր. Ղ Ա Ջ Ա Ր Ե Ա Ն Ի

Աշխատութեամբ պատրաստ են տպագրութեան

1. Հայերը Հնդկաստանում.
2. Շամիր Սուլթանում (Յակոբ) Շահամիրեան.
3. Հնդկահայ Մամուլը.
4. Հնդկահայ գրականութիւնը XIX դարում.
5. Հնդկահայ բարերարներն ու նոցա զպրօցները:

Խնդրում ենք հրատարակիչների աջակցութիւնն:

ԳԻՆՆ Է 12 ԿՈՊ.

Գիմել Թիֆլիսի բոլոր գրափաճառներին:

ՀՀ Ազգային գրադարան



NL0415900

